պէրդ Վան Էյք՝ հիւծեալ վախճանեցաւ 'ի կանտ, թողլով իր հարազատայ՝ աւարտելու այն գործը՝ զոր 'ի միասին սկսեր էին։

Այն ատեն կանտի բնակիչք՝ ցուցին իտալացւոց՝ որ իրենք ալ ունին ընտիր ճաշակ գեղարուեստից. վասն զի արուեստաւորին փառաւոր յուղարկաւորութիւն ըրին, և երկու դարու չափ այս երևելի և կրօնասէր նկարչիս բազուկն և ձեռքը՝ հասարակաց յարգութեան և զարմացման 'ի տես դրին։

Յովհաննէս՝ լքեալ իր հարազատին մահուան համար, չկրցաւ այլ ևս վըրձինը բռնել. և եթէ Մագարիտայի անխոնջ խնամքն և ժոսի անդադար աղաչանքն չլինէին, թերևս այս հռչակաւոր գլուխ գործոցն անկատար մնար։

Տասներկու տարի վերջը՝ ժողովուրդըն կրցաւ զարմանալ այս հանճարեղ գործին վրայ. որով և պատկերին վրայ արձանագրութիւն մի դրաւ՝ լատին տաղերով, այս իմաստով.

« Հուպէրդ նկարիչն, որ իր արուեստակցաց պարագլուխն է, սկսեր է այս գործս, զոր իր եղբայրն յանձն առեր է կատարելագործել, շարժեալ 'ի պաղատանաց ժոս տը Վիյդի։ — Եւ յամին 1432, մայիս 6ին աւարտելով դրուեր է 'ի տեսութիւն հասարակաց »։

Երբ ժոս տը Վիյդի յանձնած այս գործըս՝ հետաքրքիր աչաց տեսութեան դրուեցաւ, այս պատկերս եղաւ առիթ հպարտութեան կանտի բնակչաց, և մի 'ի հրաշալեաց քաղաքին։ Քաղաքացիք մեծ պատիւ ըրին Հուպէրդ Վան Էյքի յիշատակին. բազմաթիւ չքանչանօք պատուեցին իր. Յովհաննէս եղբայրը. Փիլիպպոս Գեղեցիկն ալ՝ յարքունիս կոչեց զինքը, և ժոս տը Վիյդէն գնեց այս պատկերը։ Եւ երբ Կարոլոս Հինգերորդ՝ Սէն-Բաւոնի եկեղեցին նորոգեց, եկեղեցւոյն մէջ պզտիկ մատուռ մը շինեց, որ դեռ ցարդ կը կոչուի Մատուռ Գառին (Chapelle de l'Agneau), և հոն զետեղեց Վան Էյք եղբարց պատկերը։ կանտի բնակիչք այս մատրան մէջ զետեղեցին Հուպէրդի ոսկերոտին։

ԲԱՐՈՅԱԿԱՆ ԱՌԱԾՔ ՌՈՒՍԱՑ

Նոր փայտին՝
Սուր կացին։

Խօսքը նետ չէ,
Բայց կը ծակէ։

Աչքը լաւ կը տեսնէ.
Բե՛ր ակռան՝ որ խածնէ։

Գետ է՝ կ'երթայ ցածուն, հեզ,
Բայց թումբ ունի լեռան պէս։

Մէկտեղ գալ, մէկ ապրիլ. զո՛ւր ջանք.
Հեռանալ, բաժնուիլ. տանջա՛նք։

Ամառ կուտէ,
Ձմեռն ուտէ։

Մի կախեր ամէն բան՝
Մի և նոյն գամին վրան։

Պառաւած ագռաւներ
Զուր չեն կանչուըռտեր։

Մի՛ մըռմըռար տանը գին՝
Երբ կը գընես գըրպանին։

Բանուորին գործին ձեռք մի զարներ.
Բայց գործէն զքեզ հեռու մի բռներ։

digitised by A.R.A.R.@